


տութիւն կը տեսնէ մեր քաղաքին և տճկ-
 արժանիք մէջ, արմատ արժանիք և արժանիք
 բառերուն, որ է հաշտութիւն և հաշտեցնել:
 Հետեւաբար նմանաձայնութենէն խա-
 բուած է: «Իր վերջաւորութիւնը, կ'ը-
 սէ, կշռում է Պ.ի վերացական բառերի
 նոյն վերջաւորութեան, այսպէս աստի
 ջանք, ճիշդ և այլն»:

Պ. Աղբաւան կը մտնան արդեօք թէ
 արժանիք արժանիք է և կարելի
 չէ բաժնել իրարմէ, մինչդեռ Պ. արժանիք
 արժանիք է աստի արժանիք վրայ
 աւելցած, յորմէ արժանիք արժանիք
 կազմով են նաև արժանիք արժանիք
 որոնց արժանիք է արժանիք արժանիք
 այսպիսով քաղաքին է, կը գրէ Աղբաւան, և
 իմաստի տեսակետով համարմէք է մեր
 արժանիք արժանիք, որից կազմուած են արժանիք
 արժանիք և նոյն արժանիք ունեցող
 միւս բառերը: «Արժանիք արժանիք մի պարզ ձևն
 ենք համարում արժանիք արժանիք, ինչպէս արժանիք
 արժանիք պարզ ձևն է արժանիք (հատ-ան-ել, աս-
 ան-ել): Արժանիք արժանիք ենք ծագած հա-
 մարում արժանիք բառը որ նշանակում է գոհ,
 նուէրք»:

Մայրէ ի ծայր սխալ: Մեր արժանիք պարզ-
 կերէն և պահպանելն արժանիք արժանիք է և բնաւ
 գործ չունի քաղաքին հետ. իսկ արժանիք ալ
 կը համապատասխանէ Պ. արժանիք ին, յորմէ
 արժանիք արժանիք պարզել: արժանիք
 բառին յն նախիր չէ այլ էութենէն է
 բառին, ուստի երեւակայական արժանիք ար-
 մատ մը գոյութիւն չունի (Տե՛ս Ար. Բառ.
 էջ 225 և 267): Այս հիման վրայ որչափ
 զաւելջական պիտի գտնէ ընթերցողը Պ.
 Աղբաւանին գրութեան վերջին հատուածը:

Նիւնոբ Գ. Յ. ԹԻՐԵԱՒԵԱՆ



ՈՒՆՎԱՆԻՍ

ՄԻՍԷՆ ԵՐԿԱՅԻ ՍՈՒԿ քերթուածիկին
 (ՄԻՈՆ էջ 203, երկրորդ սիւնակ) վերջին
 տան առաջին տողին մէջ «Մթնշաղի մէջ
 երկկուսն»ը պէտք է ըստ «իտիկուսն»:

ԼՈՋԱՆԻ ԿՐՕՆԱԿԱՆ ՀԱՄԱՇԽԱՐԱՅԻՆ
 ԺՈՂՈՎԸ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ

ՄԻՈՆԻ նախորդ թիւին ներագրականով
 բացատրած հիմն Լոզանի ժողովին շանակարիւ-
 նը, իբրև կրօնական մեծ շարժում Բրիտան-
 նական Եկեղեցւոյ այս դարուն պատմութեան
 մեջ, և ըստ հիմն որ չենք գիտեր քի ինչ կերպով
 պիտի մասնակցի Հայց. Եկեղեցին այս ժողովին:

Ինչպիսի որ ժամանակուսի նայ քերթու-
 մեջ, Մայր Աթոռ ուղղակի հրաւեր ասացած է
 Հաստի ու կարգի հաստի արժանիք արժանիք
 արժանիք և Ամենայն Հայց. Վեհ. Հայրապե-
 տը, իր կողմէն Յանձնաժողով մը նշանակած է
 Լոզանի ժողովին մեջ Հայց. Եկեղեցին ներկայա-
 ցնելու համար: Այդ Յանձնաժողովին անդամ-
 ներ են Տիրաց Երազան Ամերիկայի սուպե-
 րորդ, Ղևոնդ Եպս. Գուրեան Մանչեսթրի
 Հովիւ և Գրիգորիս. Եպս. Պարսիկան կրկնակ.
 Պատմութեան Երազայի:

Մայր Աթոռոյ Գեր. Հոգևոր Խորհուր-
 զը, յանուն Ն. Ս. Օծուրեան Ամ. Հայց. Վեհ.
 Հայրապետին, հետեւեալ պաշտօնակիր ուղղած է
 Յանձնաժողովին անդամներուն. պաշտօնակիր
 մը, որ կը գծի Յանձնաժողովին իրաւասու-
 րեան սահմանը Լոզանի ժողովին մասնակցելու
 համար:

Պաշտօնակիր գրուած է Գեր. Հոգևոր
 Խորհուրդի Դիւանէն, և կը կրէ 451 Թիւր և
 4 Յունիս 1927 բուսկանը:

1926 թուի մայիսի 19ը թուակիր The
 Secretariat of the World Conference on Faith and Or-
 derի հրաւերի հետեւանքով նորին Վեհա-
 փառութեան Թ. հայրապետական կոնդա-
 կով կարգուել է մի Յանձնաժողով նախա-
 գահութեամբ Տ. Տիրաց Արքեպս. և
 անդամակցութեամբ Տ. Ղևոնդ Եպս. Գուր-
 եանի և Տ. Գրիգորիս Եպս. Պարսեանի
 առաջիկայ օգոստոսի 3-21ին Լոզանում
 գումարուելիք քրիստոնէական եկեղեցիներ-
 ի Համաժողովին ներկայանալու, իբրև
 Ամենայն Հայց. Վեհափառ Հայրապետի
 ներկայացուցիչներ, ներկայացնելու Հայ
 Առաքելական հիւանուրց Եկեղեցին:

Գեր. Հոգևոր Խորհուրդը Վեհափառ
 Հայրապետի ցանկութեան և պատուէրի
 համաձայն մշակել է այն սկզբունքները:

որոնցմով պարտադրապէս պիտի ղեկավարուի վերոյիշեալ Յանձնաժողովը՝ յիշատակուած օգոստոսեան համագումարում.— որք են.

1. — Ողջունել համագործակցական Համագումարի բացումը, յայտնել Հայ Առաքելական հնազարեան ազգային եկեղեցւոյ սիրով մասնակցելը նրան, որ եկեղեցիներէ մերձեցման է ձգտում և բնդհանուր համագործակցութեամբ Բրիտանոսի սիրոյ շնչով աշխարհը փրկանելու և նրա Աւետարանի յաւիտենական դադափարները կեանքի մէջ մարմնացնելու նպատակ է գրել և ղէպի այդ նպատակներն առաջնորդելու ուղիներ հարթելու հետամուտ է:

2. — Հայ եկեղեցին՝ իր պատմական անցելուով մշակած կանոնական իրաւունքի և սրբազործած աւանդութիւնների համաձայն իր կեանքի ամենատեսակ խնդիրների լուծման մէջ՝ վախճանական որոշումներ բնդունել է Ամենայն Հայոց Ընդհանրական Հայրապետի գլխաւորութեամբ գումարուած ազգային եկեղեցական ժողովով: Ուստի և ներկայ Համագումարում Հայ եկեղեցու ներկայացուցչութիւնը իրաւունք չունի նրա վախճանական որոշումներին մասնակցելու և պարտադիր ճանաչելու այն Հայ եկեղեցու համար: Այլ յանձնարարում է միայն խորհրդակցական մասնակցութիւն ունենալու և եղած բոլոր որոշումներն ու Համագումարի ամբողջական պատկերը բնդարձակ գեկուցով մատուցանելու: Վեհափառ Հայրապետին՝ յառաջիկայ ազգային և եկեղեցական ժողովի խորհրդակցութեան և քննութեան ենթարկելու և նրա հեղինակաւոր որոշման համեմատ էլ յիշեալ Համագումարով ապագայ գումարումների մէջ իր դիրքը որոշելու:

3. — Բրիտանական եկեղեցիների մերձեցման և համագործակցութեան նախադրեալ համարելով եկեղեցիների փոխադարձ ծանօթութիւնը, այլ և ի նկատի առնելով ներկայ Համագումարի կատարելիք աշխատանքների ծրագրերը՝ յանձնարարում է Յանձնաժողովից, ըստ պահանջի հարկին, տալ Հայ եկեղեցւոյ դաւանական և ծիսական արարողական նկարագրերը, ուղեցոյց ունենալով Տիեզերական երեք ժողովները և ներսէս Ենթահայոց «Ընդհանրականը»: Ինչպէս նաև՝ յատկապէս

Հայ եկեղեցւոյ վարչական կազմակերպութեան նկատմամբ՝ Մաղաքիա Օրմանեանի բնդհանուր գնահատութեան արժանացած «Հայ եկեղեցին»: Այլ և պարտք է գրնում յանձնաժողովից վրայ յատկապէս շեշտելու Հայ եկեղեցւոյ ազգային ժողովրդական ողին, նրա գեմոկրատիկ բնոյթը՝ նկարագրելով նրա պատմական համառօտ անցելու, բնդգծելով արեւելքի բազմացել և բազմակրօն ժողովուրդների մէջ դարեր շարունակ քրիստոնէական կրօնին հաւատարիմ մնալը և նահատակ եկեղեցւոյ կեանքով ապրելը, տալով բիրաւոր փկաների շարքեր մինչև իսկ մեր օրերում:

Գերագոյն Հօգեւոր Խորհուրդը Ամենայն Հայոց Հայրապետի հաճութեամբ՝ նախադիւրով սոյն համառօտ ղեկավար սկզբունքները՝ փստահ է որ Յանձնաժողովը ընթացութեամբ, շրջահայեցողութեամբ և Հայ եկեղեցւոյ ողւոյ հարազատութեամբ կ'ընթանայ վերոյիշեալ Համագումարում, զգալով և գիտակցելով այն մեծ պատասխանատուութիւնը, որ ծանրանում է իր վրայ՝ պատուով ներկայացնելու Հայ եկեղեցին՝ այդ քրիստոնէայ եկեղեցիներից մէկը՝ իր մեծութեան, վեհութեան և քրիստոնէական ամենատեսակ սկզբունքների հաւատարմութեան մէջ, և մաղթում է յաճողութիւն ու հայցում Տիրոջ օրհնութիւն Յանձնաժողովի վրայ:

Անդամ Գեր. Հոգ Խրնդի. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊՍ.
Իլւանայիս ԲՈՒԲԷՆ Ծ. ՎՐԳ.
Քարսուլար . . .

ՍԻՈՆԻ յաջորդ բիւէն սկսեալ պիտի հրատարակենք Ս. ԵՓՐԵՄԻ ԱՍՈՐԻՈՅ ՎԵՇՏԱՍԱՆ ԱՍՍՅՈՒԱԾՔ ՎԱՍՆ ՆԻԿՈՄԻԿԵԱՅ ՔԱՂԱՅԻ գործը, ծանօթ բանասէր Պրն. Քրէտէրի Յ. Մուսրաի խնամով: Այս գործին առեւելէն բնագիրը կոստում է, և հայերէն քարգմանութեամբ միայն պահուում է Չեռագրի մը մէջ, որ սեփականութիւն է Ս. Յակոբայ Մասնադարանին: